ԱԶԳ Զանազան

# Քնքշանքի սահմանները

*«Քնքշանքը, որ ճառագայթվում ու կլանվում է ամեն օր, սահման ունի»:*

*Պոլ Վալերի*

Այլ կերպ ասած՝ ոչ ոք ի վիճակի չէ ամբողջ օրը, իսկ առավել եւս ամիսներ կամ տարիներ շարունակ ապրել քնքուշ կրքի մթնոլորտում: Ամեն ինչ հոգնեցնում է, նույնիսկ այն, որ քեզ սիրում են: Կինն ըմբոշխնում է սիրո առաջին բերկրանքը, նա համակվում է գնծությամբ, երբ առավոտից երեկո պնդում են, թե որքա՜ն գեղեցիկ, որքա՜ն սրամիտ է նա, ի՜նչ երանություն է նրան սիրելը, ի՜նչ հրաշալի են նրա զրույցները: Նա կրկնում է այդ գովերգությունն ու հավաստեցնում իր ընկերոջը, որ նա ամենալավ եւ ամենախելոք տղամարդն է աշխարհում, անզուգական սիրեկան, հիանալի զրուցընկեր: Թե մեկին, թե մյուսին դա անչափ հաճելի է: Եվ հետո ի՞նչ: Լեզվի հնարավորությունները անսահմանափակ չեն: «Սկզբում սիրահարների համար հեշտ է խոսել միմյանց հետ..., նկատել է անգլիացի գրող Սթիվենսոնը: Ես՝ այդ ես եմ, դու՝ այդ դու ես, իսկ մնացած բոլորը հետաքրքրություն չեն ներկայացնում...



Կարելի է հարյուր, բայց ոչ հարյո՞ւր հազար ձեւով կրկնել. «Ես՝ այդ ես եմ, դու՝ այդ դու ես»: Իսկ առջեւում օրերի անվերջ շարանն է»:

- Ինչպե՞ս է կոչվում այն ամուսնական միությունը, երբ տղամարդը բավարարվում է մեկ կնոջով,- հարցրել է ոմն դասախոս մի ամերիկացի ուսանողուհու:

- Միապաղաղ,- պատասխանել է նա:

Որպեսզի մենամուսնությունը չվերածվի միապաղաղության, հարկավոր է աչալրջորեն հետեւել, որ քնքշությունն ու նրա արտահայտման ձեւերը հերթագայվեն որեւէ այլ բանով: Սիրահար զույգին պետք է թարմացնեն «ծովից փչող քամիները»՝ շփումն այլ մարդկանց հետ, ընդհանուր աշխատանքը, բարեկամները, հանդեսները:

Զգացմունքների դրսեւորման եւ հորդացող պահին ծնված ու քնքուշ խոսքերը սքանչելի են: Շարունակ կրկնվող արտահայտություններով քնքշությունը ջղայնացնում է:

Ագրեսիվ եւ ամեն ինչից դժգոհ կինն արագորեն ձանձրացնում է տղամարդուն, սակայն անպահանջկոտ, ամեն ինչից պարզամտորեն հիացող կինը նույնպես երկար չի պահի իր իշխանությունը նրա նկատմամբ: Հակասությո՞ւն է: Անշուշտ: Մարդը հյուսված է հակասություններից: Մերթ մակընթացություն, մերթ տեղատվություն: «Նա պատրաստված է տագնապի ջղաձգություններից շարունակ անցնելու ձանձրույթի ընդարմացմանը», ասում է Վոլտերը: Մարդկային ցեղի շատ ներկայացուցիչներ ստեղծված են այնպես, որ հեշտությամբ են ընտելանում սիրված լինելուն եւ թանկ չեն գնահատում այն զգացմունքը, որին չափազանց վստահ են:

## Մտածենք մեր առողջության մասին

Երբեմն եղանակի փոփոխությունը մրսածության է տալիս դրսի ցուրտը: Հագնվելով ավելի թեթեւ՝ մարդիկ մրսում են, եւ օրգանիզմն այլեւս չի կարողանում դիմակայել հիվանդություններին, այդ ժամանակ որոշ միկրոբներ սկսում են իրենց ակտիվ գործունեությունը: Նման հիվանդությունների շարքին է պատկանում անգինան (նշագեղձերի բորբոքումը՝ նշաբորբը): Այս հիվանդության ժամանակ մարդկանց անհանգստացնում են գլխացավը, բկանցքի ցավերը:

Շատ հաճախ մարդիկ շտապում են հեռացնել իրենց նշագեղձերը՝ չհասկանալով, որ դրանք օրգանիզմի իմունային համակարգում իրենց դերն ու նշանակությունն ունեն, սակայն վիրահատության կարելի է դիմել միայն այն դեպքերում, երբ մարդը հաճախակի է հիվանդանում կամ հիվանդությունն ընթանում է ծանր եւ թողնում է հետեւանքներ: Անգինայով հաճախակի հիվանդություն համարվում է տարին 2-ից ավելին:

Դեռ շատ վաղուց մարդիկ այս հիվանդության դեմ պայքարել են տարբեր միջոցներով՝ դեղաբույսերով, արեւգակնային լոգանքներով: Այս մեթոդներն այժմ էլ չեն կորցրել իրենց նշանակությունը ժամանակակից բժշկության մեջ: Բացի արդիական դեղորայքային միջոցներից, նշենք այդ դեղատոմսերից մի քանիսը:

Առավոտյան ժամը 11-12 ընկած հատվածում խորհուրդ է տրվում 5-10 րոպե բերանը բաց նստել բացօթյա տեղ եւ դեմքով նայել դեպի արեւը:

Որպես տաքացնող միջոց (կոմպրես) կարելի է օգտագործել հետեւյալ խառնուրդը՝ 1 ճաշի գդալ լուծվող սուրճին ավելացնել մածուն, այնուհետեւ 4-5 պճեղ տրորած սխտոր, 2-3 ճաշի գդալ մեղր եւ եգիպտացորենի ալյուր, որպեսզի ստացվի համասեռ զանգված, այս խառնուրդը քսել պարանոցին երեկոյան եւ կապել:

Կարելի է օգտագործել 3 թ. գդալ սոխի մզվածք ավելացնելով համամասնական չափով մեղր եւ օգտագործել օրը 3 անգամ:

**ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍՏԵԼԼԱ**
*Բժիշկ-թերապեւտ*
*Սուրբ Մարիամի կլինիկա*



